

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հաշվետվություն 2017 թ.
չորրորդ եռամսյակի համար

Սույն հաշվետվությունն ամփոփում է 2017 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսերին Կրթության գերազանցության ազգային ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքները և հիմնական ձեռքբերումները:

Եռամսյակի հիմնական ձեռքբերումները

1. Շարունակվեցին բանակցություններն արտասահմանյան համալսարանների հետ և ԱԲ-ի հավաստագրի միջազգային ճանաչման աշխատանքները:
2. Առաջին անգամ Հայաստան այցելեց Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի գործադիր տնօրենը:
3. Շարունակվեցին Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրում ՀՀ մարզերից և Արցախից ընդգրկված 105 ուսուցիչ-մասնագետի դասընթացները:
4. Տրվեց Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրում մասնակիցների ներգրավման նոր փուլի մեկնարկը:
5. ԼՀՔ Կրթության ինստիտուտը կազմեց և տրամադրեց «Այբ» կրթական հիմնադրամի հետ իր եռամյա (2014-2017) համագործակցությունն ամփոփող զեկույց:
6. Շարունակվեցին ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում Արարատյան բակալավրիատի ներդրման ծրագրի մշակման աշխատանքները:
7. Շարունակվեցին Արարատյան բակալավրիատի դպրոցների ղեկավար կազմի զարգացման ծրագրի մշակման աշխատանքները:
8. Ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր «Այբ» կրթական հիմնադրամի և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի միջև՝ Արարատյան բակալավրիատի շրջանակում և համագործակցության մի շարք ուղղություններով:

Բովանդակություն

Հայկական կրթական լավագույն ավանդների ու ժամանակակից կրթության առաջատար փորձի հիման վրա ստեղծված և սովորելու մրցունակ համակարգի ձևավորում

Ուսուցիչների զարգացման և հավաստագրման ծրագրի մշակում

Գիտելիքի տարածման և լավագույն փորձի փոխանակման արդյունավետ հարթակի ստեղծում և ներդրում

Հավելվածներ

Հապավումներ

ԿԳԱԾ Կրթության գերազանցության ազգային ծրագիր

ԱԲ Արարատյան բակալավրիատ

ԱԲԲԿ Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

ԼՀՔ Լոնդոնի համալսարանական քոլեջ (University College London)

ԿԳՆ Կրթության և գիտության նախարարություն

ՔԳՄԿ Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոն (Cambridge Assessment International Education, Cambridge University)

ՄԲ ՃՀԱԳ Մեծ Բրիտանիայի ճանաչման և համեմատության ազգային գործակալություն (UK NARIC)

ՀՔԸԾ «Համալսարանների և քոլեջների ընդունելությունների ծառայություն» կազմակերպություն (UCAS), Միացյալ Թագավորության բուհական ընդունելության միասնական համակարգ

Կրթության գերազանցության ազգային ծրագիրը՝ համառոտ

Կրթության գերազանցության ազգային ծրագիրը Հայաստանի հանրակրթության որակի բարձրացման և համակարգային բարեփոխումների իրականացման նախաձեռնություն է:

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Ձևավորել սովորելու միջազգայնորեն ճանաչելի և մրցունակ համակարգ՝ հայկական կրթական լավագույն ավանդների և ժամանակակից կրթության առաջատար փորձի հիման վրա
- Բացահայտել և խրախուսել լավագույն արդյունքներ դրսևորած ուսուցիչներին, նպաստել նրանց մասնագիտական զարգացմանը, արդյունավետ կերպով օգտագործել ուսուցչական ռեսուրսը և լավագույն մարդկային ռեսուրսն ուղղորդել դեպի դպրոց
- Խթանել դպրոցների ինստիտուցիոնալ զարգացումը

Իրականացման գործիք՝ «Արարատյան բակալավրիատ» համակարգ

Նախաձեռնողներ և իրականացնողներ՝ «Այբ» կրթական հիմնադրամ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Միջազգային գործընկերներ՝ Զեմբրիջի համալսարանի «Զեմբրիջի միջազգային քննություններ» կենտրոն և Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտ

Հայկական կրթական լավագույն ավանդների ու ժամանակակից կրթության առաջատար փորձի հիման վրա ստեղծված և սովորելու մրցունակ համակարգի ձևավորում

2017 թվականի երրորդ եռամսյակում կրթության գերազանցության ազգային ծրագրի իրագործման շրջանակում շարունակվել են Արարատյան բակալավրիատի աշխատանքները հետևյալ հիմնական ուղղություններով՝

1. բանակցությունների վարում արտասահմանյան համալսարանների հետ. ԱԲ-ի հավաստագրի միջազգային ճանաչման աշխատանքների շարունակում.
2. Արարատյան բակալավրիատի ներկայացում Էդինբուրգում անցկացվող Միջազգային դպրոցների խորհրդի տարեկան գիտաժողովին.
3. 2018 թ. ԱԲ-ի ավարտական քննական կյուրթերի փորձարկում.
4. 2019 թ. ԱԲ-ի ավարտական քննաշրջանի քննաթերթիկների կազմման շարունակում.
5. 2018 թ. ԱԲ-ի ավագ դպրոցների ընդունելության քննությունների մշակման աշխատանքների շարունակում.
6. Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրում ուսուցիչների ներգրավման նպատակով քննական կյուրթերի կազմում.
7. վերապատրաստման դասընթացներ Հայաստանում Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի մասնագետների կողմից.
8. Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության գործադիր տնօրենի այց Հայաստան.
9. Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնում «Արարատյան բակալավրիատ» ծրագրի ղեկավարի այց Հայաստան, հեռաժողովի անցկացում.
10. Լոնդոնի համալսարանական քոլեջի կրթության ինստիտուտի հրատարակչության տնօրենի այց Հայաստան:

Բանակցությունների վարում արտասահմանյան համալսարանների հետ. ԱԲ-ի հավաստագրի միջազգային ճանաչման աշխատանքների շարունակում

ԱԲ-ի միջազգային ճանաչման գործընթացը շարունակական է, և աշխատանքներն իրականացվում են երկու ուղղությամբ՝ անմիջապես համալսարանների հետ և տվյալ երկրում գործող ակադեմիական ճանաչման մարմնի:

Այս եռամսյակում ԱԲ-ի հավաստագրի միջազգային ճանաչմանն ուղղված աշխատանքներն ու բանակցությունները տարվել են անմիջապես համալսարանների հետ: Արդյունքում ևս 20 համալսարան, քննելով Արարատյան բակալավրիատի որակավորումը, հաստատել է, որ այն ընդունելի է իրենց համար:

Այդ համալսարաններն են՝

1. Վիեննայի համալսարան (Ավստրիա),
2. Աբերիստուլիթի համալսարան (Ուելս),
3. «Կառավարման բարձրագույն ինստիտուտ» միջազգային բիզնես դպրոց (Ֆրանսիա),
4. Ֆուտհիլի քոլեջ (ԱՄՆ),
5. Դե Անգայի քոլեջ (ԱՄՆ),
6. Անաստասիանոսի արքայական քոլեջ (Միացյալ Թագավորություն),
7. Վիեննայի Վեբստերի մասնավոր համալսարան (Ավստրիա),
8. Քենտի համալսարան (Միացյալ Թագավորություն),
9. Ռոտերդամի Էրասմուս համալսարան (Նիդեռլանդներ),
10. Ֆլորիդայի տեխնոլոգիական և գիտական համալսարան (ԱՄՆ),
11. Հոնկոնգի տեխնոլոգիական և գիտական համալսարան (Հոնկոնգ),
12. Կանզասի պետական համալսարան (ԱՄՆ),
13. Լա Վեռնի համալսարան (ԱՄՆ),
14. Լեյդենի համալսարան (Նիդեռլանդներ),
15. Նագոյայի համալսարան (Ճապոնիա),
16. Ռիվերսայդի Կալիֆոռնիայի համալսարան (ԱՄՆ),
17. Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարան (ԱՄՆ),
18. Տորոնտոյի համալսարան (Կանադա),
19. Վուստերի պոլիտեխնիկական համալսարան (ԱՄՆ),
20. Ֆորդհամի համալսարան (ԱՄՆ):

Նշենք, որ այս համալսարանների կողմից որակավորման ընդունումը պայմանավորված էր նաև նոյեմբերին Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի ղեկավարի և կենտրոնի ճանաչման մասնագետի՝ Մեծ Բրիտանիայի Էդինբուրգ քաղաքում անցկացվող Միջազգային դպրոցների խորհրդի տարեկան գիտաժողովին (CIS) մասնակցությամբ (այս մասին ավելի մանրամասն՝ Էջ 9-ում):

Նշում 1: Համալսարանների և տվյալ երկրում գործող ակադեմիական ճանաչման մարմինների համար ԱԲ-ի ճանաչման առաջին քայլը գիտելիքների և հմտությունների բարձր մակարդակ ունեցող թեկնածուից դիմումի ստացումն է: Աշակերտի առաջադիմությունն ու ԱԲ-ի միջազգային ճանաչումը փոխկապակցված են: Այդ իսկ պատճառով ԱԲ-ի հավաստագրի ճանաչման աշխատանքը մեկնարկում է, երբ տվյալ բուհ

դիմորդ է լինում, հետևաբար դիմորդների աճին զուգահեռ կաճի նաև այն բուհերի թիվը, որոնց հետ տարվում են ճանաչման աշխատանքներ:

Նշում 2: ԱԲ-ի ճանաչումը չի երաշխավորում աշակերտի՝ իր նախընտրած համալսարան ընդունվելը: ԱԲ-ի ճանաչումը նշանակում է, որ համալսարանը պատրաստակամ է դիտարկելու նրա դիմում-հայտը: Առաջատար համալսարաններում ընդունելության որոշումը կատարվում է մի շարք չափանիշների նկատառմամբ, և դրա կայացման գործում որոշիչ դեր են խաղում աշակերտի գնահատականներն ու նվաճումները:

Արարատյան բակալավրիատի ներկայացում էդիներգում անցկացվող Միջազգային դպրոցների խորհրդի տարեկան գիտաժողովին

Նոյեմբերի 15-16-ին Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի ղեկավար Թոմ Սամուելյանը և կենտրոնի ճանաչման մասնագետ Ռուզաննա Մայիլյանը մասնակցեցին Մեծ Բրիտանիայի էդիներգ քաղաքում անցկացվող Միջազգային դպրոցների խորհրդի տարեկան գիտաժողովին (CIS):

Այս տարի գիտաժողովին մասնակցեցին 800-ից ավելի դպրոցներ և համալսարաններ աշխարհի 70-ից ավելի երկրից, այդ թվում Կանադայից, ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Նիդեռլանդներից, Ավստրիայից, Շվեյցարիայից և այլն:

Գիտաժողովի շրջանակում Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի ներկայացուցիչներն ավելի քան 60 համալսարանի ներկայացրին «Արարատյան բակալավրիատ» հայալեզու և միջազգայնորեն ճանաչված որակավորումը:

«Առաջին անգամ է, որ Հայաստանը և մեր երկրում մշակված կրթական որակավորումը ներակայացվեցին այս գիտաժողովին: Եվ սա կարևոր քայլ էր համաշխարհային մակարդակով մրցունակ հայկական կրթության միջազգային ճանաչման և ամրապնդման ուղղությամբ: Նման գիտաժողովներին մասնակցությունը հնարավորություն է տալիս բարձրացնելու իրազեկվածությունը ԱԲ-ի և հայկական կրթության մասին, ինչն էլ իր հերթին կնպաստի նրան, որ որակյալ հայ աշակերտները սովորեն լավագույն համալսարաններում և լիովին կայանան և իրագործեն իրենց ներուժը այնպիսի ոլորտներում, որոնք կարևոր են Հայաստանի զարգացման և բարգավաճման համար», - ասաց Թոմ Սամուելյանը:

Այս երկօրյա գիտաժողովը հնարավորություն ընձեռեց ոչ միայն ներկայացնելու Արարատյան բակալավրիատը միջազգային կրթական հանրությանը՝ այդպիսով խթանելով որակավորման միջազգային ճանաչումը աշխարհի առաջատար համալսարանների կողմից, այլև մասնակցելու մասնագիտական զարգացմանն ուղղված տարատեսակ հանդիպումների և կապեր ստեղծելու այլ դպրոցների և մասնավորապես համալսարանների հետ:

2018 թ. ԱԲ-ի ավարտական քննական նյութերի փորձարկում

2017 թ. հոկտեմբերին ԱԲ-ի քննական կենտրոնի մասնագետները փորձարկեցին ԱԲ-ի 2018 թ. քննական նյութերը բոլոր 4 առարկաներից (քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, մաթեմատիկա) և կազմեցին գեկույցներ, որոնց հիման վրա Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի համապատասխան մասնագետները կատարեցին անհրաժեշտ փոփոխություններ:

Նոյեմբերի 7-14-ը ԱԲ-ի քննական կենտրոնի մասնագետներն այցելեցին Քեմբրիջ՝ մասնակցելու 2018 թ. քննական նյութերի համազորության հանդիպումներին:

Նշենք, որ 2017 թ. դեկտեմբերին ԱԲ-ի քննական կենտրոնի հայոց պատմության թիմը մշակեց 2018 թ. «հայոց պատմություն» առարկայի ավարտական քննությունների քննաթերթիկները:

2019 թ. ԱԲ-ի ավարտական քննաշրջանի քննաթերթիկների կազմման շարունակում

Դեկտեմբերին ԱԲ-ի քննական կենտրոնի բնագիտական առարկաների մասնագետները կազմեցին 2019 թ. ավարտական քննաշրջանի համար «Ընտրովի պատասխանով հարցեր» քննաթերթիկի 2 տարբերակ՝ յուրաքանչյուրը բաղկացած 40 հարցից, իսկ մաթեմատիկայի խումբը կազմեց 2019 թ. ավարտական քննաշրջանի համար նախատեսված «Մաքուր մաթեմատիկա 1» քննաթերթիկի և գնահատման սխեմայի 2 տարբերակ:

Քննական նյութերն ուղարկվել են Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի մասնագետներին վերանայման ու խմբագրման և երկու քննաթերթիկներից 1 տարբերակ կազմելու նպատակով:

2018 թ. ԱԲ-ի ավագ դպրոցների ընդունելության քննությունների մշակման աշխատանքների շարունակում

Ինչպես նշված է ԿԳԱԾ-ի երրորդ եռամսյակային հաշվետվության մեջ, սեպտեմբեր 1-30-ը Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի առարկայական մասնագետները կազմել են 2018 թ. ԱԲ-ի ավագ դպրոցների ընդունելության քննական նյութերը: Այս նյութերը կազմվել են չորս առարկայից՝ մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն:

Այնուհետև՝ 2017 թ. նոյեմբերին, կենտրոնի մասնագետները կազմեցին ԱԲ-ի ավագ դպրոցների ընդունելության քննաթերթիկների և գնահատման սխեմաների երկրորդ տարբերակները:

Հիշեցնենք, որ, 2018 թվականից սկսած, Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնն աշակերտների ընդունելության քննություններ կանցկացնի նաև ՀՀ մարզերի և Արցախի՝ ԱԲ-ի դպրոցների ցանցին միացած ավագ դպրոցներ ընդունվել ցանկացող աշակերտների համար:

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրում ուսուցիչների ներգրավման նպատակով քննական նյութերի կազմում

Դեկտեմբերին ԱԲ-ի քննական կենտրոնի բնագիտական առարկաների (ֆիզիկա, կենսաբանություն և մաթեմատիկա) և հայոց պատմության թիմերը կազմեցին Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրում ուսուցիչ-մասնագետների ներգրավման շրջանակում անցկացվող առարկայական թեստավորման քննական նյութերը՝ քննաթերթիկներն ու գնահատման սխեմաները:

Հիշեցնենք, որ ծրագրում ուսուցիչների ներգրավման նոր փուլը մեկնարկել է դեկտեմբերի 13-ին (այս մասին ավելի մանրամասն տե՛ս էջ 14-ում):

Վերապատրաստման դասընթացներ Հայաստանում Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի մասնագետների կողմից

Հոկտեմբերի 28-29-ին Հայաստան այցելեց Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի մասնագետ Մայքլ Սմիթը: Այցի նպատակն էր անցկացնել վերապատրաստման երկօրյա դասընթաց՝ ԱԲ-ի բնագիտական (քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն) առարկաների քննությունների համար կառուցվածքավորված հարցեր ստեղծելու և քննաթերթիկ կազմելու վերաբերյալ: Դասընթացի շրջանակում հայ մասնագետներն աշխատեցին առանձին խմբերով և ստեղծեցին մի քանի հարց՝ դրանց գնահատման սխեմաներով:

Նոյեմբերի 25-26-ին Հայաստան այցելեց Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի մասնագետ Սյուզան Հուքերը: Այցի նպատակն էր անցկացնել վերապատրաստման երկօրյա դասընթաց՝ «Մաքուր մաթեմատիկա 1» և «Մաքուր մաթեմատիկա 2» քննաթերթիկների համար հարցեր ստեղծելու և քննաթերթիկներ

կազմելու վերաբերյալ: Դասընթացի շրջանակում հայ մասնագետներն աշխատեցին առանձին խմբերով և ստեղծեցին մի քանի հարց՝ դրանց գնահատման սխեմաներով:

Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի գործադիր տնօրենի այց Հայաստան

Հոկտեմբերի 9-ին առաջին անգամ Հայաստան այցելեց Քեմբրիջի համալսարանի Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի գործադիր տնօրեն Մայքլ ՕՍալիվանը՝ ամփոփելու «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ) հայալեզու և միջազգայնորեն ճանաչված ծրագրի շրջանակում «Այբ» կրթական հիմնադրամի հետ եռամյա համագործակցության արդյունքները և քննարկելու հետագա ծրագրերը:

Մեկօրյա այցի ընթացքում Մայքլ ՕՍալիվանը շրջեց ԱԲ ծրագիրն առաջարկող առաջին կրթօջախում «Այբ» դպրոցում ծանոթանալով դպրոցի առօրյա կյանքին, տեխնիկական հնարավորություններին, ինչպես նաև աշակերտների կողմից իրականացվող հանրօգուտ ծրագրերին:

Այնուհետև Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի գործադիր տնօրենը հանդիպում ունեցավ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հետ, որն ընդգծեց, որ «Այբ» կրթական հիմնադրամի ու ծրագրի միջազգային գործընկեր Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի համագործակցությունը Հայաստանին կօգնի նոր թափ հաղորդելու հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին, որոնց նպատակն է միջազգային չափանիշներին համապատասխանող որակյալ կրթություն տրամադրել աշակերտներին: «Այս նպատակի իրականացման գործում կարևոր է Կրթության գերազանցության ազգային ծրագրի շրջանակներում Արարատյան բակալավրիատի ներդրումը՝ միտված հայկական կրթական լավագույն ավանդույթների և ժամանակակից կրթության առաջատար փորձի հիման վրա միջազգային ճանաչելի և մրցունակ համակարգի ձևավորմանը», - նշեց ՀՀ Նախագահը:

Մայքլ ՕՍալիվանն ասաց, որ Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնն աշխատում է աշխարհի բազմաթիվ երկրների կրթական համակարգերի բարեփոխման ուղղությամբ՝ լավագույն փորձի տեղայնացմամբ և ոչ թե կրկնօրինակմամբ: Նրա խոսքով՝ Հայաստանում ստեղծված են լավագույն հիմքերը նման բարեփոխումների իրականացման համար: «Հայաստանում ի դեմս «Այբ» կրթական հիմնադրամի մենք ունենք լավ գործընկեր, որի հետ համագործակցությամբ հնարավոր է իրականացնել անհրաժեշտ բարեփոխումները», - նշեց Մայքլ ՕՍալիվանը:

Նշում: «Այբ» կրթական հիմնադրամի հետ համագործակցության շրջանակում Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնը տրամադրում է աջակցություն ԱԲ-ի հայալեզու քննությունների մշակման և ԱԲ-ի քննական որակավորումների միջազգային ճանաչման գործում:

Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնում «Արարատյան բակալավրիատ» ծրագրի ղեկավարի այց, հեռաժողովի անցկացում

Հոկտեմբերի 6-9-ը Հայաստան այցելեց Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնում «Արարատյան բակալավրիատ» ծրագրի ղեկավար Հեդեր Սանդերսը, որը մասնակցեց Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի և Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի ղեկավարությունների հեռաժողովին՝ ամփոփելու 2016-2017 թթ. պայմանագրով նախատեսված և իրականացված աշխատանքներն ու գնահատելու դրանք:

Հանդիպման մասնակիցները նաև անդրադարձ կատարեցին հաջորդ տարվա անելիքներին:

Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հրատարակչության տնօրենի այց Հայաստան

Հոկտեմբերի 24-26-ը Հայաստանում էր Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հրատարակչության տնօրեն, դոկտոր Նիկի Փլատը, որը երեք օր շարունակ հանդիպեց հայ մասնագետներին՝ քննարկելու դասագրքերի տեղայնացված թարգմանությունը և «հայոց պատմություն» առարկայի շրջանակում դասագրքերի ու ուսուցիչների ձեռնարկների կազմումը: Հանդիպումների ընթացքում մասնավորապես շեշտադրվել են հետևյալ թեմաները՝ ինչ է լավ դասագիրքը, ինչպես է այն կազմվում, ինչի վրա է պետք կենտրոնանալ այն կազմելիս, ինչ պետք է ներառել ուսուցիչների ձեռնարկում:

Ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիր

Կրթության գերազանցության ազգային ծրագրի հիմնական նպատակներից են լավագույն արդյունքներ դրսևորած ուսուցիչներին բացահայտելն ու խրախուսելը, նրանց մասնագիտական զարգացմանը նպաստելը, ուսուցչական և լավագույն մարդկային ռեսուրսը դեպի դպրոց ուղղելը:

Այս առումով 2017 թվականի չորրորդ եռամսյակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. շարունակվել են Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրում ՀՀ մարզերից և Արցախից ընդգրկված 105 ուսուցիչ-մասնագետի դասընթացները.
2. Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի մասնակիցներն «Այբ» դպրոցում անցկացրել են դասալսումներ.
3. տեղի են ունեցել Արարատյան բակալավրիատի փորձագետ վերապատրաստողների շարունակական զարգացմանն ուղղված հանդիպումներ՝ ԼՀՔ Կրթության ինստիտուտի մասնագետների մենտորությամբ.
4. տրվել է Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրում մասնակիցների ներգրավման նոր փուլի մեկնարկը.
5. շարունակվել են Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի հիմնական նյութերի թարգմանման-ստեղծման աշխատանքները.
6. ԼՀՔ Կրթության ինստիտուտը կազմել և տրամադրել է «Այբ» կրթական հիմնադրամի հետ իր եռամյա (2014-2017) համագործակցությունն ամփոփող զեկույց:

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրում ՀՀ մարզերից և Արցախից ընդգրկված 105 ուսուցիչ-մասնագետի դասընթացների շարունակում

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիրը 10-11 ամիս տևողությամբ ծրագիր է՝ բաղկացած տեսական և գործնական դասընթացներից: Այն իրականացվում է ուսումնառության դեմառդեմ և առցանց տարբերակներով:

Ծրագրին ուսուցիչ-մասնագետների մասնակցությունը պաշտոնապես մեկնարկեց 2017 թ. երկրորդ եռամսյակում հունիսին:

Դեմառդեմ ուսումնառություն

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի շրջանակում նախատեսված է երեք դեմառդեմ հանդիպում, որոնց ընթացքում մասնակիցները քննարկում են մի շարք թեմաներ և կատարում գործնական աշխատանքներ, որոնք նպաստում են նրանց մանկավարժական հմտությունների և կարողությունների զարգացմանն ու ընդլայնմանը:

Մասնակիցների առաջին դեմառդեմ հանդիպումներն անցկացվեցին երրորդ եռամսյակում սեպտեմբերի 16-17-ին: Այս հանդիպումների ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները՝ պրոֆեսիոնալիզմ, ուսումնառության համընթաց պլանավորում, դասարանային գործունեության օրինակելի մոդել, ծանոթացում հարցադրումների մեթոդին, տնային աշխատանք և առաջադրանքների մշակում:

Երկրորդ և երրորդ դեմառդեմ հանդիպումներն անցկացվեցին չորրորդ եռամսյակում: Նշենք, որ թե առաջին, թե երկրորդ և թե երրորդ դեմառդեմ հանդիպումների շրջանակում Հայաստան է ժամանել Լոնդոնի համալսարանական քոլեջի (ԼՀՔ) Կրթության ինստիտուտի ավագ մասնագետ, դոկտոր Յացեկ Բրանտը՝ ներկա գտնվելու ծրագրի մասնակիցների ուսումնառության գործընթացին և իրականացնելու փորձագետ-վերապատրաստողների շարունակական զարգացմանն ուղղված քննարկում-հանդիպումներ (այս մասին ավելի մանրամասն՝ Էջ 17-ում):

Երկրորդ դեմառդեմ հանդիպումներ

Երկրորդ դեմառդեմ հանդիպումները տեղի ունեցան հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3-ը: Այս հանդիպումներին մասնակցեց 106 ուսուցիչ-մասնագետ (մասնակիցների թվի փոփոխության մասին ավելի մանրամասն՝ Էջ 16-ում): Հանդիպումների ընթացքում անդրադարձ է կատարվել հետևյալ թեմաներին՝ «Ինչ է գնահատումը. ծանոթացում ուսումնառությանը նպաստող գնահատմանը», «Բնութագրական արձագանքի տրամադրում», «Տեխնոլոգիաների կիրառումը գնահատման և բնութագրական արձագանքի համար», «Ինքնուրույն ուսումնառություն», «Հարցադրումների մեթոդ. հարցադրումներ գնահատման համար», «Ուսումնառության տարբերակման ռազմավարություններ», «Ծանոթացում վկայություններից բխող փորձառությանը», «Ծանոթացում փորձառության հետազոտությանը», «Հետազոտության թեմայի ընտրություն», «Եզրակացությունների մեկնաբանում և ներկայացում», «Հետազոտական աշխատանքի պլանավորման և իրականացման գործընթաց. մենտորություն և քուլչինգ», «Համագործակցության նախագծում և թիրախավորում»:

Երկրորդ դեմառդեմ հանդիպմանը ներկա լինելու նպատակով Հայաստանում գտնվող Յացեկ Բրանտը հանդես եկավ «Դասավանդման հայեցակարգումը» թեմայով ելույթով:

Երրորդ դեմառդեմ հանդիպումներ

Դեկտեմբերի 16-17-ին անցկացվեցին ծրագրի մասնակիցների երրորդ դեմառդեմ հանդիպումները, որոնց մասնակցեց 105 ուսուցիչ-մասնագետ (մասնակիցների թվի փոփոխության մասին ավելի մանրամասն՝ Էջ 16-ում): Հանդիպման ընթացքում նրանք անդրադարձ կատարեցին հետևյալ թեմաներին՝ «Փորձագիտական գիտելիք», «Մանկավարժական-առարկայական գիտելիք», «Ուսումնագործնական համայնք», «Ստեղծագործականություն», «Թղթապանակը՝ որպես մասնագիտական զարգացման ընդհանրական վկայություն. բովանդակություն և կառուցվածք»:

Հանդիպումների շրջանակում Յացեկ Բրանտը հանդես եկավ «Ուսուցիչը որպես սովորող, ուսուցիչը որպես հետազոտող» թեմայով ելույթով:

Առցանց ուսումնառություն

Առցանց ուսումնառությունն Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի բաղկացուցիչ մաս է: Առցանց ուսումնառության շրջանակում մասնակիցներն ընթերցում են մասնագիտական հոդվածներ, մասնակցում դրանց շուրջ առցանց խմբային քննարկումների և գրում վերլուծական անդրադարձներ:

Նշում: Ծրագրի առաջին փուլի ընթացքում ծրագրի մասնակիցները նաև առաջին անգամ ունեցան մասնագիտական Էլեկտրոնային փոստային հասցեներ, սկսեցին կիրառել ուսումնառության առցանց համակարգեր, մասնակցել առցանց քննարկումների:

Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ԱԲ-ի 8 փորձագետ վերապատրաստողները ծրագրի մասնակիցների հետ անցկացրեցին 164 առցանց խմբային քննարկում (72-ը՝ հոկտեմբերին, 46-ը՝ նոյեմբերին, և ևս 46-ը՝ դեկտեմբերին)՝ հիմնականում շաբաթական 3 անգամ: Այս ընթացքում քննարկվեց 7 մասնագիտական հոդված:

Ծրագրի մեկնարկից մինչև այսօր անցկացվել է 332 առցանց խմբային քննարկում հիմնականում շաբաթական 3 անգամ: Այս ընթացքում քննարկվել է 14 մասնագիտական հոդված:

Մասնակիցների միջանկյալ գնահատում

2017 թ. չորրորդ եռամսյակում Արարատյան բակալավրիատի փորձագետ-վերապատրաստողներն իրականացրել են մասնակիցների ընթացիկ առաջադիմության միջանկյալ՝ ձևավորող գնահատում և դրա արդյունքները տրամադրել մասնակիցներին:

Նշենք, որ ծրագրի մասնակիցների վերջնական՝ ամփոփիչ գնահատումը և հավաստագրումը կկատարվեն 2018 թ. մասնակիցների ներկայացրած թղթապանակի և հետազոտության հիման վրա, որոնք նրանք հավաքում և իրականացնում են ծրագրի

մեկնարկից մինչև ավարտը: Ամփոփիչ գնահատումը նախատեսվում է 2018 թ. գարնանը, իսկ հավաստագրումը՝ ամռանը:

ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիրը լքած մասնակիցներ. պատճառներ և հիմնավորումներ

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրում ընդգրկվելու հնարավորություն էր ստացել 111 մասնակից, որոնցից 26-ը՝ պայմանական սկզբունքով՝ հարցազրույցի փուլի չափանիշները մասնակի բավարարելու պատճառով:

Ինչպես նշված է ԿԳԱԾ-ի երրորդ եռամսյակային հաշվետվության մեջ, հուլիս-սեպտեմբեր ամիսներին մասնակիցների թիվը նվազել է չորսով (այս մասնակիցների՝ ծրագիրը լքելու պատճառներն ու հիմնավորումները ներկայացված են ԿԳԱԾ-ի 2017 թ. երրորդ եռամսյակային հաշվետվության մեջ): Չորրորդ եռամսյակում մասնակիցների թիվը նվազել է ևս երկուսով, և այսօր նրանց թիվը հասնում է 105-ի:

Ստորև ներկայացնում ենք վերոնշյալ երկու մասնակիցների՝ ծրագրին մասնակցությունը չջարունակելու պատճառ-հիմնավորումները:

- *Միսիանի ավագ դպրոցի* մաթեմատիկայի ուսուցչուհի Լուսինե Պարոնյանը հոկտեմբերին դադարեցրել է մասնակցությունը ծրագրին՝ պայմանավորված առողջական խնդիրներով:
- *Գյումրու թիվ 3 ավագ դպրոցի* պատմության ուսուցչուհի Հերմինե Սիմոնյանը դեկտեմբերին դադարեցրել է մասնակցությունը ծրագրին՝ պայմանավորված հղիությամբ և ծրագրին մասնակցելու հետ կապված որոշակի դժվարություններով:

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի մասնակիցների անցկացրած դասալսումներ «Այբ» դպրոցում

«Այբ» դպրոցն առաջին կրթօջախն է, որտեղ փորձարկվել և ներդրվել է «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագիրը: Փորձի փոխանակման միջոցով Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի մասնակիցներին չորրորդ եռամսյակում հնարավորություն է տրվել դասալսումներ անցկացնելու «Այբ» դպրոցում: Արդյունքում ծրագրի ութ մասնակից դեկտեմբերին իրականացրել է դասալսումներ «հայոց լեզու», «հայոց պատմություն», «մաթեմատիկա», «քիմիա», «կենսաբանություն» և «ֆիզիկա» առարկաներից:

Արարատյան բակալավրիատի փորձագետ վերապատրաստողների շարունակական զարգացմանն ուղղված հանդիպումներ

Շարունակական զարգացումը ԱԲ-ի փորձագետ-վերապատրաստողների մասնագիտական գործունեության կարևոր մասն է, որպեսզի նրանք մշտապես և շարունակաբար կատարելագործեն իրենց հմտություններն ու գիտելիքները, ինչպես նաև իրագեկված լինեն աշխարհում տեղի ունեցող կրթական նորարարությունների մասին:

Այս նպատակով չորրորդ եռամսյակում ԱԲ-ի փորձագետ վերապատրաստողները հանդիպումներ ունեցան Յացեկ Բրանտի հետ: Վերջինս նրանց տրամադրեց աջակցություն ու բնութագրական արձագանք և իրականացրեց անհատական մենտորություն: Նաև իրականացվել են համատեղ դասալսումներ՝ զարգացնելու փորձագետ-վերապատրաստողների դասալսման և բնութագրական արձագանք տալու հմտությունները:

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրում մասնակիցների ներգրավման նոր փուլի մեկնարկ

Դեկտեմբերի 13-ին մեկնարկեց Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրում մասնակիցների ներգրավման նոր փուլը: Ծրագրին դիմելու վերջնաժամկետը փետրվարի 1-ն է: Մասնակցությունը ծրագրին անվճար է բոլոր մասնակիցների համար:

Մեկնարկին ընդառաջ կազմվել են ծրագրին դիմելու հայտը, դիմում-հայտի լրացման ուղեցույցը, մշակվել են ծրագրին դիմելու փուլերն ու քայլերը (տե՛ս հավելված Ա-ում) և կազմվել կամ լրամշակվել են առարկայական քննություններին նախաատրաստվելու ամբողջական ուղեցույցներն ութ առարկայի համար (հայոց լեզու, հայոց պատմություն, մաթեմատիկա, քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, անգլերեն և ռուսերեն):

Ծրագրում ներգրավվելու համար բոլոր ցանկացողները պետք է անցնեն և հաջողությամբ հաղթահարեն ընտրության երեք փուլերը՝ ներկայացնեն դիմում-հայտ, անցնեն առարկայական թեստավորում և մասնակցեն անհատական հարցազրույցի:

Նոր փուլին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր՝

- ունեն մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ վերջին 10 տարվա ընթացքում առնվազն 5 տարվա մանկավարժական ստաժ և դասավանդում կամ ցանկանում են դասավանդել հետևյալ առարկաներից մեկը՝

Ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, կենսաբանություն, հայոց պատմություն, հայոց լեզու և գրականություն, անգլերեն և ռուսերեն.

- սովորում են բակալավրիատի կամ մագիստրատուրայի վերջին կուրսում՝ Նշված առարկաներից որևէ մեկի մասնագիտացմամբ՝ մասկավարժական որակավորման հնարավորությամբ:

Մասնակիցների ընտրությունը կատարվելու է մրցութային կարգով՝ առաջին հերթին ԱԲ-ի թեկնածու դպրոցներից: Այնուհետև նրանց ներգրավումը կկատարվի հետևյալ առաջնահերթությամբ՝ ԱԲ-ի թեկնածու դպրոցներին մոտ բնակավայրերից, տվյալ մարզից, հարևան մարզերից և Երևանից:

Երևանաբնակ դիմորդները կարող են մասնակցել ընդունելության փուլերին, միայն եթե պատրաստ են ծրագիրն ավարտելուց հետո աշխատելու ՀՀ մարզերի և Արցախի դպրոցներում: Հավասար պայմանների դեպքում առաջնահերթություն կտրվի մարզերից դիմորդներին:

Ծրագրում ներգրավվելու ժամանակացույցը

| | |
|-----------------------------------|---|
| Դեկտեմբերի 13 - փետրվարի 1 | Դիմում-հայտերի ընդունում |
| Փետրվարի 1-12 | Դիմում-հայտերի ամփոփում |
| Փետրվարի 12 | Դիմում-հայտերի լրացման փուլի չափանիշները բավարարած դիմորդների ծանուցում առարկայական թեստավորման անցկացման տեղի և ժամի մասին |
| Փետրվարի երրորդ շաբաթ | Առարկայական թեստավորում |
| Փետրվարի 26 - մարտի 7 | Թեստավորման արդյունքների վերաբերյալ ծանուցում թեստավորմանը մասնակցած բոլոր դիմորդներին Նշում: Թեստավորման փուլը հաղթահարած դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի: |
| Մարտի 12-30 | Անհատական հարցազրույցների անցկացում |
| Ապրիլի 2-10 | Հարցազրույցների փուլի ամփոփում |
| Ապրիլի 20 | Ծանուցում դիմորդներին ծրագրում ներգրավվելու/չներգրավվելու մասին |

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի հիմնական նյութերի թարգմանման-ստեղծման աշխատանքների շարունակում

2017 թ. չորրորդ եռամսյակում շարունակվել է ԱԲ-ի ուսուցիչների զարգացման ծրագրի շրջանակում յուրաքանչյուր թեմայի համար պարտադիր ընթերցանության նյութերի (հիմնական նյութեր) թարգմանությունը: Այս գործընթացը մեկնարկել է 2016 թվականին:

Այս եռամսյակում թարգմանվել է 5 հոդված, և այսօր թարգմանված հոդվածների թիվը հասնում է 54-ի:

«Այբ» կրթական հիմնադրամի հետ ՀՀԶ Կրթության ինստիտուտի եռամյա (2014-2017) համագործակցությունն ամփոփող զեկույց

Դեկտեմբերին ՀՀԶ Կրթության ինստիտուտը «Այբ» կրթական հիմնադրամին ներկայացրեց երկու կառույցների միջև եռամյա համագործակցության մասին զեկույց, որը մանրամասն նկարագրում և ամփոփում է 2014-2017 թթ. իրականացված աշխատանքները, ներառյալ՝ ՀՀԶ Կրթության ինստիտուտի մասնագետների ներգրավվածությունը, օժանդակությունն ու խորհրդատվությունը Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի, ինչպես նաև Արարատյան բակալավրիատի ավագ ուսուցիչների զարգացման և հավաստագրման ծրագրի մշակման, փորձարկման, լրամշակման և վերջնականացման գործում:

«The IOE is well-versed in helping clients develop their education systems across the world. We are excited to work with Armenian colleagues and delighted by the depth at which the ideas presented and discussed have been considered», - նշված է զեկույցում:

Զեկույցը հասանելի է առցանց՝ հետևյալ հղումով՝

<https://foundation.ayb.am/frontend/images/ck/files/UCL%20IoE%20Report%20to%20Ayb%20Educational%20Foundation.pdf>:

Գիտելիքի տարածման և լավագույն փորձի փոխանակման արդյունավետ հարթակի ստեղծում և ներդրում

2017 թվականի չորրորդ եռամսյակում շարունակվել են ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում Արարատյան բակալավրիատի ներդրման ծրագրի և ԱԲ-ի դպրոցների տնօրենների զարգացման ծրագրի մշակման աշխատանքները, և կազմվել են անհատական հաշվետվություններ այն դպրոցների վերաբերյալ, որոնք 2019 թվականից կարող են հավաստագրվել որպես Արարատյան բակալավրիատի դպրոց:

Իրականացված հիմնական աշխատանքները ներառում են՝

1. ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում Արարատյան բակալավրիատի ներդրման ծրագրի մշակման աշխատանքների շարունակում.
2. Արարատյան բակալավրիատի ստանդարտների փաստաթղթի մշակում.
3. Արարատյան բակալավրիատի թեկնածության փուլում գտնվող դպրոցների համար ուղեցույցների մշակում.
4. Արարատյան բակալավրիատի դպրոցների ղեկավար կազմի զարգացման ծրագրի մշակման աշխատանքներ.
5. հաշվետվությունների կազմում այն դպրոցների վերաբերյալ, որոնք կարող են հավաստագրվել որպես ԱԲ-ի դպրոց՝ 2019 թվականից սկսած.
6. փոխըմբռնման հուշագրի ստորագրում «Այբ» կրթական հիմնադրամի և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի միջև՝ Արարատյան բակալավրիատի շրջանակում և համագործակցություն մի շարք ուղղություններով:

ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում Արարատյան բակալավրիատի ներդրման ծրագրի մշակման աշխատանքների շարունակում

Ինչպես նշված է Կրթության գերազանցության ազգային ծրագրի երրորդ եռամսյակային հաշվետվության մեջ, հուլիս-սեպտեմբեր ամիսներին ամփոփվել են ՀՀ կառավարությանը ներկայացվելիք՝ ԱԲ-ի ներդրման հետ կապված ծրագրի նախնական մշակման աշխատանքները, որից հետո ծրագիրը ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ ֆինանսների և տարածքային կառավարման նախարարություններ, որոնցից ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա ծրագիրը

վերանայվել, լրամշակվել ու ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ առաջարկությունների և դիտարկումների ակնկալիքով:

Չորրորդ եռամսյակում ՀՀ արդարադատության նախարարությունից ստացվել են առաջարկություններ և դիտարկումներ, որոնց հիման վրա ծրագիրը վերջնականապես լրամշակվել է, կատարվել են 2018-2021 թթ. ԱԲ-ի ներդրման համար անհրաժեշտ բյուջետային կանխատեսումները:

Ծրագիրը նախատեսվում է ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը 2018 թվականին:

Արարատյան բակալավրիատի ստանդարտների փաստաթղթի մշակում

Չորրորդ եռամսյակում շարունակվել է Արարատյան բակալավրիատի ստանդարտների փաստաթղթի մշակումը: Այս փաստաթուղթը կսահմանի Արարատյան բակալավրիատի կրթակարգն ու առարկայախմբերը, ԱԲ-ի դպրոցի ուսուցչի, ղեկավար կազմի և աշակերտների նկարագիրը, ԱԲ-ի դպրոցի ենթակառուցվածքները և ծրագրի այլ չափանիշներ:

Այս փաստաթուղթը նաև կներկայացնի 2018 թ. հավաստագրվող դպրոցներում ԱԲ ծրագրի ներդրման սկզբունքներն ու չափանիշները:

Արարատյան բակալավրիատի ստանդարտների փաստաթղթի մշակումը նախատեսվում է ավարտել 2018 թ. առաջին եռամսյակում:

Ուղեցույցների մշակում Արարատյան բակալավրիատի թեկնածուական փուլում գտնվող դպրոցների համար

Թեկնածուական փուլում գտնվող դպրոցների համար ուղեցույցների և կարգերի մշակումը մեկնարկել է երրորդ եռամսյակում: Այս աշխատանքները շարունակվել են չորրորդ եռամսյակում հիմնականում հետևյալ ուղղություններով.

- **Մշակվել է դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված ուղեցույցի նախնական տարբերակը**, որը սահմանում է այն հիմնադրույթներն ու սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվի ԱԲ-ի դպրոցի խորհուրդն իր գործունեությունը ծավալելիս: Այս ուղեցույցը ներկայացվել է ԱԲ-ի 21 թեկնածու դպրոցներին և արդեն չորրորդ եռամսյակում նրանցից ստացված դիտարկումների և մեկնաբանությունների հիման վրա լրամշակվել է: ԼՀԲ-ի մասնագետների հետ վերջնականացումից հետո այն կշրջանառվի ԱԲ-ի թեկնածու դպրոցներում

խորհրդի հետագա աշխատանքները տվյալ փաստաթղթով կազմակերպելու համար:

- **Մշակվել է կրթական միջավայրի բարելավման նպատակով առարկայական լաբորատորիաների նախագծման և համալրման ուղեցույց**, որը սահմանում է դպրոցներում առարկայական լաբորատորիաների նախագծման և կահավորման նվազագույն պահանջները և ներառում ԱԲ-ի առարկայական ծրագրերի դասավանդման համար անհրաժեշտ սարքավորումներն ու նյութերի մանրամասն ցանկը: Այս ուղեցույցը ևս ուղարկվել է ԱԲ-ի 21 թեկնածու դպրոցներին: Ուղեցույցի պահանջներին համապատասխան՝ դպրոցները կատարել են առկա լաբորատորիաների վերլուծություն և ներքին գնահատում՝ դուրս բերելու իրենց լաբորատոր կարիքները և այդ կարիքները հոգալու համար անհրաժեշտ մոտավոր ֆինանսական ռեսուրսները:

Արարատյան բակալավրիատի դպրոցների ղեկավար կազմի (տնօրենների և փոխտնօրենների) զարգացման ծրագրի մշակման աշխատանքներ

Արարատյան բակալավրիատի դպրոցների ղեկավար կազմի (տնօրենների և փոխտնօրենների) զարգացման ծրագրի մշակման աշխատանքները մեկնարկել են երկրորդ եռամսյակում և շարունակվել երրորդ և չորրորդ եռամսյակներում: Ծրագրի մշակումն իրականացվում է Լոնդոնի համալսարանական քոլեջի (ԼՀՔ) Կրթության ինստիտուտի հետ համագործակցությամբ:

Այս նպատակով դեռևս հունիսին Հայաստան էին այցելել ԼՀՔ Կրթության ինստիտուտի տնօրենների զարգացման և առաջնորդության ծրագրերի տնօրեն Ջոնաթան Դեյլն ու խորհրդատու Թոնի Ռիչարդսոնը, ովքեր ԿԳԱԾ-ի թիմի և ԱԲ-ի թեկնածու դպրոցների ղեկավար կազմերի հետ հանդիպումներից հետո երրորդ եռամսյակում ներկայացրել են տնօրենների զարգացման ծրագրի նախնական կառուցվածքը, որի վերաբերյալ ԿԳԱԾ-ի թիմը կատարել է դիտարկումներ ու հավելումներ:

Չորրորդ եռամսյակում, մասնավորապես՝ հոկտեմբերի 3-6-ը, Ջոնաթան Դեյլը և Թոնի Ռիչարդսոնը կրկին այցելեցին Հայաստան և երկու օր՝ հոկտեմբերի 4-ին և 5-ին, շրջեցին Կոտայքի, Լոռու, Արմավիրի և Վայոց ձորի մարզերում: Մարզային այցերի ընթացքում նրանք հանդիպում-քննարկումներ ունեցան Արարատյան բակալավրիատի թեկնածու դպրոցների տնօրենների և փոխտնօրենների հետ՝ համատեղ մշակելու ԱԲ-ի դպրոցների տնօրենների զարգացման ծրագիրը:

Հանդիպումները բաղկացած էին երկու մասից: Առաջին մասում մասնագետները ներկայացրին համաշխարհային հետազոտությունների արդյունքները տնօրենի դերի և դպրոցի արդյունավետ կառավարման վերաբերյալ, իսկ երկրորդ մասում ԱԲ-ի թեկնածու

դպրոցների տնօրեններն ու փոխտնօրենները քննարկումների միջոցով ներկայացրին հայկական դպրոցի տնօրինության դերն ու աշխատանքների ոլորտները:

Մասնագետների խոսքով՝ իրենց համար հատկապես ոգևորիչ էր տեսնել, որ, չնայած ֆիզիկական միջավայրի խնդիրներին, Արարատյան բակալավրիատի թեկնածու դպրոցներում կան իրենց գործի նվիրյալ տնօրեններ ու ուսուցիչներ, որոնք պատրաստ են փոփոխությունների:

Հանդիպումների արդյունքներն ամփոփվեցին չորրորդ եռամսյակում. դրանց հիման վրա մշակվեցին դպրոցների ղեկավար կազմի ստանդարտները, իսկ արդեն 2018 թ. առաջին եռամսյակում կմշակվի զարգացման ծրագիրը:

Նշում: Մարզային այցերի ավարտից հետո մասնագետները հոկտեմբերի 6-ին հանդիպում ունեցան ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանի հետ: Հանդիպմանը ներկա էր նաև «Այբ» կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն Սոնա Կոշեցյանը: Հանդիպման հիմնական նպատակն էր հասկանալ նախարարության տեսակետը հայկական դպրոցների կառավարման, տնօրինության ստանդարտների և դերի վերաբերյալ: Հանդիպման ընթացքում քննարկվեց Հայաստանի կրթության զարգացման տեսլականը, մասնավորապես՝ Արարատյան բակալավրիատի (ԱԲ) դերն ու տնօրենների զարգացման ծրագրի կարևորությունն այդ գործում:

Հոկտեմբերին կատարած այցից հետո ԼՀԶ Կրթության ինստիտուտի մասնագետները ներկայացրել են ԱԲ-ի դպրոցների ղեկավար կազմի զարգացման ծրագրի կառուցվածքի վերանայված տարբերակը, որի վերաբերյալ ԿԳԱԾ-ի թիմը կրկին ուղարկել է իր դիտարկումներն ու հավելումները:

Զարգացման ծրագրի մշակման շրջանակում նոյեմբերի 27-29-ը Թոնի Ռիչարդսոնը ևս մեկ անգամ այցելեց Հայաստան: Այցի ընթացքում պրն Ռիչարդսոնը մի շարք քննարկումներ ունեցավ ԿԳԱԾ-ի թիմի ներկայացուցիչների հետ, հանդիպեց ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանին և Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնի մասնագետներին: Այս հանդիպման նպատակն էր հասկանալ երկու կառույցների տեսակետները հայկական դպրոցների կառավարման, ղեկավար կազմի ստանդարտների և դերի վերաբերյալ:

Արարատյան բակալավրիատի դպրոցների ղեկավար կազմի զարգացման ծրագրի մշակումը դեռ շարունակվում է, և ծրագրի մեկնարկը նախատեսվում է 2018 թվականի գարնան վերջին:

Հաշվետվություններ այն դպրոցների վերաբերյալ, որոնք կարող են հավաստագրվել որպես ԱԲ-ի դպրոց՝ 2019 թվականից սկսած

Ինչպես նշված է Կրթության գերազանցության ազգային ծրագրի երրորդ եռամսյակային հաշվետվության մեջ, սեպտեմբերին ԿԳԱԾ-ի թիմն անհատական այցեր կատարեց Տավուշի, Արարատի, Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու, Գեղարքունիքի մարզերի 11 դպրոց, որոնք, ըստ կանխատեսումների, կարող են սկսել թեկնածության փուլը միայն 2018 թվականից սկսած և հավաստագրվել որպես Արարատյան բակալավրիատի դպրոց ոչ շուտ, քան 2019 թվականը (*այս դպրոցների թիվը 13-ն է. այցերն այս դպրոցներ մեկնարկել էին դեռևս մայիսին. տե՛ս դպրոցների ցանկը հավելված Բ-ում*):

Այցերի նպատակն էր ամբողջական պատկեր ստանալ այս դպրոցների մասին, ծանոթանալ նրանց նպատակներին, կրթական մոտեցումներին, միջավայրին ու ավանդույթներին, բացահայտել այն ոլորտները, որոնք հետագա բարելավման կարիք ունեն և այլն: Երկժամյա հանդիպումներին յուրաքանչյուր դպրոցից մասնակցել են առնվազն 8 աշակերտ և 8 ուսուցիչ: Այցերի հիման վրա յուրաքանչյուր դպրոցի համար կազմվել են անհատական զեկույցներ և ներկայացվել Արարատյան բակալավրիատի դպրոցների հավաստագրման հանձնաժողովին:

Նախատեսվում է, որ այս դպրոցների տնօրենները 2018 թ. փետրվարին հարցազրույցներ կունենան հավաստագրման հանձնաժողովի անդամների հետ, որից հետո պարզ կլինի 2019 թվականից թեկնածության փուլը մեկնարկող դպրոցների ցանկը:

Հիշեցնենք, որ Արարատյան բակալավրիատին ՀՀ մարզերի և Ստեփանակերտի դպրոցների միանալու գործընթացը մեկնարկել է 2016 թվականին:

Ծրագրին միանալու դիմում-հայտ է ներկայացրել ՀՀ մարզերի և Ստեփանակերտի՝ ավագ բաղադրիչ ունեցող 55 դպրոց (այս դպրոցներից 54-ը գտնվում է ՀՀ մարզերում, իսկ մեկը՝ Ստեփանակերտում), որոնք բաժանվել են ըստ թեկնածության փուլի մեկնարկային տարվա:

Դիմում-հայտերի քննման արդյունքում առաջին փուլ անցած 27 դպրոցներից 21-ը 2017 թվականի գարնանը ներառվեց թեկնածության փուլում. մյուս վեց դպրոցներից 3-ը (Հրազդանի թիվ 10 ավագ դպրոց, Աբովյանի Խ. Աբովյանի անվան թիվ 1 ավագ դպրոց, Արարատի ավագ դպրոց), ըստ կանխատեսումների, թեկնածության փուլում կներառվի 2018 թվականի գարնանից, իսկ մյուս 3-ի դեպքում առաջարկվել են համագործակցության այլ ուղիներ:

Փոխըմբռնման հուշագրի ստորագրում «Այբ» կրթական հիմնադրամի և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի միջև՝ Արարատյան բակալավրիատի շրջանակում և համագործակցության մի շարք ուղղություններով

Նոյեմբերի 23-ին «Այբ» կրթական հիմնադրամը և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամը (COAF) ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր, որով երկու հիմնադրամները կհամագործակցեն «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ) հայալեզու և միջազգայնորեն ճանաչված ծրագրի և շահառու համայնքներում «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի կողմից իրականացվող կրթական ծրագրերի շրջանակում:

Հուշագիրը մասնավորապես ուղղված է գործող ծրագրերի և նախաձեռնությունների շրջանակում երկու հիմնադրամների միջև փորձի փոխանակմանը, համատեղ մեթոդական ուղեցույցների, կրթական և վերապատրաստման գործիքների մշակմանն ու կիրառմանը, փորձագիտական ու մասնագիտական ներուժի և առկա այլ ռեսուրսների օգտագործման հնարավորության դիտարկմանը, Լոռու մարզի Դեբետ համայնքում կառուցվող ՍՄԱՐԹ կենտրոնում, հետագայում նաև այլ մարզերի ՍՄԱՐԹ կենտրոններում համատեղ միջոցառումների իրականացմանը, ինչպես նաև Արարատյան բակալավրիատի թեկնածու դպրոցների, այդ թվում՝ Արմավիրի, Լոռու, Շիրակի, Տավուշի և Արագածոտնի մարզերի դպրոցների զարգացման գործընթացներին աջակցություն ցուցաբերելուն:

«Այբ» կրթական հիմնադրամի անունից հուշագիրը ստորագրեց գործադիր տնօրեն Սոնա Կոչեցյանը, իսկ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի անունից՝ գործադիր տնօրենի պաշտոնակատար Իննեսա Գրիգորյանը:

Հուշագրի ստորագրմանը ներկա էին Կրթության գերազանցության ազգային ծրագրի տնօրեն Տ. Մեսրոպ քհն. Արամյանը, «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի հիմնադիր և խորհրդի ատենապետ, դոկտոր Կարո Արմենը և երկու հիմնադրամների ներկայացուցիչները:

Հուշագրի ստորագրումից հետո երկու հիմնադրամները սկսեցին ակտիվ համագործակցություն: Չորրորդ եռամսյակի ընթացքում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ, որոնք ուղղված էին համագործակցության հնարավոր ուղղությունները սահմանելուն և այդ ոլորտներին վերաբերող աշխատանքների պլանավորմանը:

- Քննարկվեցին առողջ դպրոցի գաղափարը և Առողջություն խրախուսող դպրոցների եվրոպական ցանցի (European Network of Health Promoting Schools) մանրամասները: Որոշվեց կազմակերպել սեմինար-հանդիպում ԱԲ-ի 21 թեկնածու դպրոցների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելու «առողջ դպրոց» գաղափարն ու առողջապահական բոլոր բաղադրիչները, ինչպես նաև

Առողջություն խրախուսող դպրոցների եվրոպական ցանցին միանալու կարևորությունն ու մանրամասները: Այս սեմինարը նախատեսվում է իրականացնել 2018 թ. գարնանը:

- Որոշվեց կազմակերպել հոգեբանի դերին և գործառույթներին վերաբերող սեմինար՝ նախատեսված ԱԲ-ի 21 թեկնածու դպրոցների տնօրենների, փոխտնօրենների և հոգեբանների համար: Սեմինարի շրջանակում նախատեսվում են խմբային աշխատանքներ, դպրոցներում հոգեբանների հետ իրականացված աշխատանքների փորձի, հոգեբանի դերի և գործառույթների, աշակերտների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված գործողությունների ներկայացում: Այս սեմինարը նախատեսվում է իրականացնել 2018 թ. փետրվար-մարտ ամիսներին:
- Որոշվեց հնարավորություն ընձեռել Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի մասնակիցներին՝ մասնակցելու անգլերենի ուսուցման անվճար առցանց ծրագրին: Ուսուցումը կսկսվի 2018 թ. փետրվարին:

Հավելված Ա

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների զարգացման և հավաստագրման ծրագրին դիմելու փուլերն ու քայլերը

| | |
|--|---|
| Փուլ 1. Դիմում | <ul style="list-style-type: none">•Քայլ 1: Ծանոթանալ դիմում-հայտի լրացման ուղեցույցին և լրացնել այն•Քայլ 2: Սպասել առարկայական քննության անցկացման մասին ծանուցման (Էլփոստով) |
| Փուլ 2. Առարկայական թեստավորում | <ul style="list-style-type: none">•Քայլ 3: Մասնակցել առարկայական թեստավորման•Քայլ 4: Սպասել թեստավորման արդյունքների վերաբերյալ ծանուցման (Էլփոստով) |
| Փուլ 3. Հարցազրույց | <ul style="list-style-type: none">•Քայլ 5: Մասնակցել հարցազրույցին•Քայլ 6: Սպասել մասնակցության մասին ծանուցման (Էլփոստով) |
| Փուլ 4. ԱԲ-ի ուսուցիչների զարգացման ծրագրին մասնակցություն | <ul style="list-style-type: none">•Քայլ 7: Մասնակցել ծրագրով նախատեսված բոլոր հանդիպումներին և կատարել բոլոր առաջադրանքները•Քայլ 8: Անցնել ծրագրով նախատեսված փորձաշրջանը և իրականացնել հետազոտական աշխատանք |
| Փուլ 5. Գնահատում և հավաստագրում | <ul style="list-style-type: none">•Քայլ 9: Տրամադրել ԱԲ-ի թեկնածու ուսուցչի թղթապանակը ամփոփիչ գնահատման համար•Քայլ 10: Հավաստագրում |

Փուլ 1. Դիմում-հայտի ընդունում

Քայլ 1: Եթե համապատասխանում եք ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի ընդունելության պահանջներին, ապա անհրաժեշտ է լրացնել դիմում-հայտը մինչև 2018 թվականի փետրվարի 1-ը ներառյալ:

Քայլ 2: Դիմորդի կարգավիճակ ստացած ուսուցիչները փետրվարի 12-ին կստանան ծանուցում առարկայական թեստավորման անցկացման տեղի և ժամի մասին:

Փուլ 2. Առարկայական թեստավորում

Քայլ 3: Առարկայական թեստավորումը կանցկացվի փետրվարի երրորդ շաբաթվա ընթացքում, կենտրոնացված կերպով, ԱԲ-ի քննական կենտրոնի կողմից, որը և պատասխանատու է թեստերի ստուգման և արդյունքների տրամադրման համար: Առարկայական թեստի հարցերին, դրանց բովանդակային բաշխվածությանը, ինչպես նաև թեստի ընդհանուր ձևաչափին կարող եք ծանոթանալ կայքում տեղադրված թեստերի օրինակներից, ինչպես նաև Արարատյան բակալավրիատի ուսումնական ծրագրերի սեղմ տարբերակներից: Առարկայական թեստավորման նպատակն է

բացահայտել դիմորդների առարկայական գիտելիքի մակարդակը, ինչպես նաև տվյալ առարկան դասավանդելու հմտությունները:

Քայլ 4: Թեստավորման արդյունքների վերաբերյալ ծանուցումը կուղարկվի բոլոր մասնակիցներին մինչև մարտի 7-ը: Առարկայական թեստավորումը հաղթահարած բոլոր դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի:

Փուլ 3. Հարցազրույց

Քայլ 5: Հարցազրույցի փուլը տեղի կունենա մարտի 12-30-ը: Հարցազրույցի նպատակն է բացահայտել դիմորդների՝ ծրագրին մասնակցելու մոտիվացիան, դասավանդման փիլիսոփայությունը, վերլուծական անդրադարձ կատարելու կարողությունները, զարգանալու պատրաստակամությունը, հաղորդակցվելու հմտությունները և անձնային որակները: Հարցազրույցն իրականացվում է նախապես մշակված հարցաշարով՝ դրան համապատասխան գնահատման սանդղակով:

Քայլ 6: Հարցազրույցի փուլի արդյունքները կամփոփվեն ապրիլի 2-ից 10-ն ընկած ժամանակահատվածում, իսկ վերջնական արդյունքների մասին կծանուցվի ապրիլի 20-ին: Այս փուլը հաղթահարած դիմորդները կհամարվեն ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման (ԱԲ-ի ՌԻՄՀՀ) ծրագրի մասնակիցներ և կընդգրկվեն ծրագրով նախատեսված աշխատանքներում:

Փուլ 4. ԱԲ-ի ուսուցիչների զարգացման ծրագրին մասնակցություն

Քայլ 7: ԱԲ-ի թեկնածու ուսուցիչները կմասնակցեն ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրով նախատեսված բոլոր հանդիպումներին, դեմ առ դեմ հանդիպումներին և քննարկումներին: Այս փուլը կտևի 5 ամիս:

Քայլ 8: ԱԲ-ի թեկնածու ուսուցիչներն ուսումնառության առաջին 5 ամիսը հաղթահարելուց հետո պետք է մասնակցեն փորձաշրջանին՝ դասավանդելով ծրագրով նախատեսված պարտադիր ժամաքանակ, ինչպես նաև կատարեն դասարանային հետազոտական աշխատանք: Այս փուլի ընթացքում ԱԲ-ի յուրաքանչյուր թեկնածու ուսուցիչ կունենա մենտոր, ով կաջակցի և կուղղորդի ամբողջ փորձաշրջանի և հետազոտական աշխատանք կատարելու ընթացքում:

Փուլ 5. Գնահատում և հավաստագրում

Քայլ 9: 4-րդ փուլի ավարտին ԱԲ-ի թեկնածու ուսուցիչը պետք է հանձնի գնահատվող թղթապանակը, որը կամփոփի թեկնածու ուսուցչի ծրագրի ընթացքում ուսումնառության արդյունքները: Թղթապանակը ստուգվում է ԱԲ-ի ուսուցչի չափանիշներին համապատասխան 2 տարբեր գնահատողների կողմից:

Քայլ 10: Թղթապանակի ստուգումից հետո արդյունքները ներկայացվում են հավաստագրման հանձնաժողովին: Հավաստագրված ուսուցիչն իրավունք է ստանում

դասավանդելու ԱԲ-ի ուսումնական ծրագիրն առաջարկող դպրոցում և դառնալու ԱԲ-ի ուսուցչական համայնքի անդամ:

ԱԲ-ի ուսուցչի զարգացման և հավաստագրման ծրագրի հետ կապված ցանկացած հարցի դեպքում խնդրում ենք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 093 52 37 17, կամ գրել ab_teachers@abedu.am էլփոստի հասցեին:

Հավելված Բ

Ցանկ 13 դպրոցների, որոնք կարող են հավաստագրվել որպես ԱԲ-ի դպրոց՝ 2019 թվականից սկսած

| Դպրոցի ամբողջական անվանում | Մարզ | Քաղաք/գյուղ |
|--|-------------|---------------|
| 1. Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց | Արագածոտն | գ. Արագածավան |
| 2. Փոքր Վեդու Մ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց | Արարատ | գ. Փոքր Վեդի |
| 3. Վանաշենի միջնակարգ դպրոց | Արարատ | գ. Վանաշեն |
| 4. Վաղարշապատի Գ. Նարեկացու անվան թիվ 2 ավագ դպրոց | Արմավիր | ք. Էջմիածին |
| 5. Գավառի Մ. Բունիաթյանի անվան թիվ 8 միջնակարգ դպրոց | Գեղարքունիք | ք. Գավառ |
| 6. Վարդենիսի Հ. Համբարձումյանի անվան ավագ դպրոց | Գեղարքունիք | ք. Վարդենիս |
| 7. Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոց | Լոռի | ք. Վանաձոր |
| 8. Վանաձորի Ս. Նալդռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոց | Լոռի | ք. Վանաձոր |
| 9. Քասախի Ա. Հովհաննիսյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց | Կոտայք | գ. Քասախ |
| 10. Բերդավանի միջնակարգ դպրոց | Տավուշ | գ. Բերդավան |
| 11. Կողբի Զ. Ղարախանյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց | Տավուշ | գ. Կողբ |
| 12. Կողբի Բ. Սահակյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց | Տավուշ | գ. Կողբ |
| 13. Բերդի ավագ դպրոց | Տավուշ | ք. Բերդ |